

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

4. Ն. ՇԱՓԱՂԱԹՅԱՆ

Քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրն արդիական է ներկա հասարակական-քաղաքական պայմաններում, երբ կատարվում են արմատական փոփոխություններ:

Նախ՝ սրվեցին հակասությունները քաղաքական փորձի փոխանցման գործընթացում, տեղի ունեցավ հին արժեքների և կողմնորոշումների որոշակի կորուստ, այդ թվում և՛ քաղաքական, սասանվեց իշխանությունների հանդեպ վստահությունը, գլուխ բարձրացրեցին քաղաքական բողոքի ահարեկչական ձևերը: «Էկզիստենցիալ վակուումի» մթնոլորտը՝ կապված կյանքի իմաստի որոշակի կորստի, սեփական գոյության անիմաստության հետ, հասարակության մեծ մասի համար դարձել է դաժան իրականություն: Ժողովրդի քաղաքական հոգեբանությանը քնորոշ են դարձել նեգատիվիզմը և հոռետեսությունը:

Լուրջ փոփոխություններ տեղի ունեցան տնտեսական գործընթացներում. գիտատեխնիկական առաջընթացը, նոր տեխնոլոգիաների ի հայտ գալն առաջ բերեցին էական փոփոխություններ հասարակության սոցիալական կառուցվածքում: Ստեղծված դժվար իրավիճակից դուրս գալու հաջողությունն անմիջականորեն կապված է տնտեսության հետ: Մինչև արդյունավետ չաշխատի արտադրությունը, ժամանակին չվճարվեն աշխատավարձերը, չբարելավվի ժողովրդի բարեկեցությունը, չծևավորվի հզոր միջին խավ, կարծում ենք, քաղաքական սոցիալականացման ներդաշնակ մոդելի մասին խոսելը դեռ վաղ է: Իսկ ներդաշնակ մոդելը ենթադրում է հանրույթի հիմնական շահերի հանընկում, որն անհնար է «աղքատ-հարուստ» բևեռների մթնոլորտում:

Ապրելակերպի փոփոխությունները զգալիորեն քարդացրեցին անձի դիրքը հասարակական-քաղաքական միջավայրում: Այս գործընթացներն ուղղակի կամ անուղղակի ազդում են քաղաքական սոցիալականացման վրա: Թե ինչ ձևով և ինչ հաջողությամբ կընթանա Հայաստանի զարգացումը, վերջին հաշվով կախված է յուրաքանչյուր քաղաքացու սոցիալականացման աստիճանից, քաղաքական կամքից, շարքային անձի արժեքներից և իղեալներից, այսինքն՝ որքանով է նա քաղաքական գործունեության սուբյեկտ: Այս ամենով հանդերձ, հարկ ենք համարում նշել, որ հենց այսպիսի ժամանակահատվածներում է քաղաքական սոցիալականացումն ընթանում արդյունավետ, քանի որ դուրս են մղվում արգելակ հանդիսացող հին սահմանափակումները, և ստեղծվում են նոր պայմաններ քաղաքական կամքի ազատ դրսևորման համար:

Ջարգացման ողջ ընթացքում հասարակության քաղաքական կուլտուրան կատարում է իր կարևոր գործառույթներից մեկը՝ անձի քաղաքական սոցիալականացումը: Այլ կերպ ասած՝ անձի մուտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներգրավումը քաղաքական հարաբերություններում իրագործվում են քաղաքական նորմերի և արժեքների ընկալման ու յուրացման ընթացքում: Իր հերթին, քաղաքական սոցիալականացումը, ընդգրկելով նոր սերունդների քաղաքական կյանքը, ապահովում է քաղաքական մշակույթի վերարտադրությունը և, որպես կանոն, թույլ է տալիս հասնել այն նվազագույն կոնսենսուսին քաղաքացու և պետության միջև, որը երաշխավորում է կառավարման ռեժիմի հարաբերական կայունություն:

Քաղաքական համակարգի պահպանմանը նպաստող քաղաքացիական գործունեության հիմնական սոցիալականացումը գրավում է կարևորագույն տեղ այնքանով, որքանով որ ոչ մի համակարգ չի կարող ունենալ ինտեգրացիայի և կայունության բավարար մակարդակ, եթե իր անդամների մեջ չմշակի քաղաքական գիտելիքների, արժեքների և կողմնորոշումների որոշակի պաշար: Վերջին հաշվով, ցանկացած հասարակության զարգացման մակարդակը նշանակալիորեն կախված

է այն բանից, թե կենսագործունեության ինչպիսի սոցիալ-քաղաքական արժեքներ են կրում իր անդամները: Ակնհայտ է, որ մարդիկ չեն ծնվում գիտելիքների պատրաստի պաշարով: Դրանք ձեռք են բերվում ամբողջ կյանքի ընթացքում: Այս տեսանկյունից քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրը բացառիկ կարևորություն է ձեռք բերում:

Հարկ է նշել, որ «քաղաքական սոցիալականացում» տերմինը ածանցվել է «սոցիալականացում» ավելի լայն հասկացությունից:

Սոցիալականացումը մի կողմից՝ սոցիալական նորմերի, արժեքների յուրացումը և այդ հիմքի վրա արժեքային կողմնորոշումների, սոցիալական պահանջմունքների մշակումն է, մյուս կողմից՝ անձի իրական մուտքը հասարակական-քաղաքական կյանք¹:

Սոցիալականացումն ընդհանրական իմաստով նշանակում է հասարակության անդամների քաղաքակրթության գործընթաց, որի ընթացքում մարդիկ յուրացնում են վարքի այնպիսի ձևեր, նորմեր, արժեքներ և հայացքներ, որոնք խումբը կամ հանրույթը համարում է կարևոր: Մի կողմից՝ անհատը պետք է տիրապետի այն ամենին, ինչ սպասում է իրենից հասարակությունը, մյուս կողմից՝ պետք է ձեռք բերի անհրաժեշտ հատկություններ, որպեսզի կարողանա իրեն դրսևորել այդ սպասումներին համապատասխան: Այս ձևով հասարակությունը ձևավորում է մարդկանց վարքը, որն էլ իր հերթին ձևավորում է հասարակությունը:

Հետևաբար, սոցիալականացման ընթացքում անհատները որպես մասնակիցներ ակտիվորեն նպաստում են հասարակության ձևավորմանը:

Քաղաքական սոցիալականացումը՝ որպես ամբողջ կյանքում շարունակվող և հասարակայնորեն պայմանավորված գործընթաց, իր մեջ ներառում է այն բոլոր գործոնները, որոնք մարդուն դարձնում են քաղաքական անձ. քաղաքական գիտելիքներ, հայացքներ, կարծիքներ, գործելու պատրաստականություն, արժեքներ, գիտակցության ձևեր, շարժառիթներ և ընդունակություններ, զգացմունքային ոլորտ, որոնք ունեն քաղաքական բովանդակություն և ուղղորդված են դեպի քաղաքականությունը:

Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է ասել, որ քաղաքական սոցիալականացումն ունի երկու կողմ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ կողմն այն է, որ անձը մշտական շփման մեջ է օբյեկտիվ գործոնների հետ, որոնցից են սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր հարաբերությունները, հասարակության մեջ իշխող ավանդույթները, հասարակական գիտակցությունը և այլն:

Քաղաքական սոցիալականացման սուբյեկտիվ կողմը կապված է հասարակության գիտակցական և նպատակամղված գործունեության հետ՝ իր անդամների մեջ ձևավորելու քաղաքական որակներ: Այս գործառույթը կատարում են դաստիարակության և ուսուցման տարրեր համակարգեր:

Նշենք, որ սոցիալականացումը ենթադրում է անընդմեջ ուսուցման գործընթաց: Ուսուցումը նախկինում ընկալված վարքի կաղապարների անընդհատ նորացման, հավելման գործընթաց է: Երբ վաղ ձեռքբերված վարքի կաղապարները չեն համապատասխանում իրականությանը, տեղի են ունենում նշանակալից փոփոխություններ: Բնականաբար, այս հանգամանքներում վարքի նոր մոդելների անհրաժեշտություն է զգացվում: Այստեղ միանգամայն տեղին է հիշատակել Տ. Շիրտտանիի այն դատողությունը, որ վարքի լավ կաղապարները անցած հիմնախնդիրների յուրօրինակ լուծումներն են²: Քանի որ յուրաքանչյուր ոք բխվում է իր տեսակի մեջ եզակի հիմնախնդիրների հետ և դրանք լուծում է յուրովի, ուստի ամեն մեկի մեջ ձևավորվում է նմանը չունեցող անհատականություն: Ասվածը թույլ է տալիս փաստել, որ սոցիալականացման ժամանակ անձի զարգացումը կարելի է դիտարկել որպես տվյալ օրգանիզմի էվոյուցիոն ձևափոխություն, որպես հետևանք այն բանի, թե ինչպես է անձը հաշվի նստում նոր հանգամանքների հետ:

Գիտության մեջ բոլոր երևույթների առաջացմանն ու ձևավորմանը նպաստում են որոշակի պայմաններ, նախկինում ստեղծված տեսություններ, տեսական հիմքեր և այլն:

Խոսելով քաղաքական սոցիալականացման երևույթի տեսական հիմքերի մասին՝ հարկ է ընդգծել, որ մեկ հողավածի մեջ հնարավոր չէ մանրամասնել բոլորը, ուստի հակիրճ անդրադարձանք փիլիսոփայական հայեցակետերից առավել կարևորներին:

Պոզիտիվիզմի ծառայությունն այն է, որ մրա ներկայացուցիչներն ընդգծում են մարդկային

¹ Տե՛ս «Политологический словарь», М., 1984, էջ 201:

² Տե՛ս Գ. Շիրտտան, Политическая психология, Ростов-на-Дону, 1998, էջ 156:

գործունեության դերը, ուսումնասիրում են մարդկանց վարքը քաղաքականության մեջ, ձգտում են օգտագործել նորագույն տեխնիկական միջոցներ էմպիրիկ նյութի հետազոտման համար:

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը ձգտում է ստեղծել մարդկային գործունեության միասնական տեսություն: Նրա ներկայացուցիչները գիտակցում են ժամանակակից հասարակության և անձի եասսեր էության միջև գոյություն ունեցող կապը: Ուստի առաջարկում են կատարելագործել հսկողությունն անձի նկատմամբ, ապահովել սոցիալականացման ազդեցությունը, որ հասարակությունը կարողանա նորմալ գործել:

Իռացիոնալ մարդաբանական ուղղության ներկայացուցիչները գտնում են, որ անձն ռեֆլեքսիոն բարդ կառուցվածք, նրա սոցիալականացումն ընթանում է համատեղ խմբակային գործունեության մեջ՝ ընդունելով կազմակերպված որոշումներ: Անձի և սոցիալական միջավայրի միջև գոյություն ունեցող կապը բավական խորն է, իսկ փոխազդեցության մեխանիզմները՝ բազմազան:

Սոցիալականացման տեսության մեջ գաղափարների մի նոր շարք առաջ քաշեց Ֆրեյդը, որն ընդգծեց անգիտակցականի դերը որպես վարքի կարևոր բաղկացուցիչ: Ֆրեյդիզմն իր ուշադրությունը քննեց անձի զգայական հիմքին և առաջ քաշեց այն միտքը, որ մարդու կենսաբանական սկիզբն առաջնային է սոցիալականի համեմատ:

Քաղաքական սոցիալականացման տեսության համար անժխտելի է հոգեբանների ու սոցիոլոգների ներդրումը, որոնք մշակել են անձի մոդելները, սոցիալական նորմերի և արժեքների ազդեցության մեխանիզմները:

Մշակութա-մարդաբանները սոցիալականացումը դիտարկում են որպես մշակութային ժառանգության փոխանցման գործընթաց: Մարդը մշակույթն ընկալում է իր անհատական զարգացման պլիզմայով: Մշակույթը սերտորեն կապված է ազգային բնութագրի հետ, որում ամրագրված են կոնկրետ էթնիկական խմբի՝ սերնդեսերունդ փոխանցվող հոգեբանական գծերը:

Սոցիալականացման հիմնախնդրի բոլորովին տարբեր մեկնաբանություն են տալիս սոցիալական հոգեբանները, որոնք անձին դիտարկում են սոցիալական ամբողջից ածանցյալ: 'Դրա հետ մեկտեղ՝ անձերի շփումն ընթանում է օբյեկտիվ օրենքներով, որոնք ամրագրված են սոցիալական դերերի համակարգում: Այս ուղղության շրջանակներում առաջ եկավ կոմֆորմիզմի հիմնախնդիրը, որը սոցիալականացման խնդիրը հանգեցնում է սոցիալական միջավայրի հետ առավելագույն կոմֆորմացմանը: Կոմֆորմիստները սոցիալականացումը նույնացնում են դերերի պարզ յուրացման հետ, որի արդյունքում տեղի է ունենում պասիվ անհատի հարմարվողականություն վարքի պատրաստի կադապարներին, այսինքն՝ վարքի ձևերի փոխանցում մեկից մյուսին:

Այս հայեցակետը լայն տարածում գտավ կազմակերպման, կառավարման տեսություններում:

Սոցիալականացման կոգնիտիվ մոդելի ներկայացուցիչները, մերժելով անձի նկատմամբ վարքաբանական մոտեցումը, կայուն որը համարում են անձի ճանաչողական, զգայական, բարոյական կառուցվածքների զարգացումը, նրա պահանջմունքները: Ըստ կոգնիտիվիզմի՝ անձի վարքը պայմանավորված է նրա գիտելիքներով, որոնք մարդու գիտակցության մեջ ձևավորում են որոշակի պատկեր աշխարհի մասին: Հենց այդ պատկերը, այլ ոչ թե իրականությունն է կառավարում մարդկանց վարքը: Այս մոտեցման շրջանակներում մշակվում են անձի զարգացման փուլերը, և ընդգծվում է, որ անձի հասունացման ընթացքում սոցիալականացման գործակալները փոքր դեր են խաղում, քանի որ անձի մեջ ձևավորվում են բնական ուժեր, որոնք ապահովում են անձի սահուն մուտքը հասարակություն:

Քաղաքական սոցիալականացման վերաբերյալ արտահայտած փիլիսոփայական հայեցակետերը լուրջ տեսական հիմքերից մեկը դարձան քաղաքական սոցիալականացման տեսության ձևավորման համար:

Քաղաքական սոցիալականացման դասական տեսությունը մշակել են Չիկագոյի գիտնականները՝ Դ. Իստոնի գլխավորությամբ: Նրանք քաղաքական սոցիալականացումը դիտարկում են որպես մարդու կողմից հատուկ դերերի յուրացման գործընթաց, որոնք անհրաժեշտ են քաղաքականության ոլորտում գործունեություն ծավալելու համար: Այս տեսության համակիրները (Լ. Կոնն, Ռ. Լիպտոն, Տ. Պարսոնս) հիմնականում ուշադրությունը քննում են մարդու և քաղաքական համակարգի ու նրա ինստիտուտների հետ ունեցած փոխգործադրությունների վրա³:

³ Stiu B. П. Пугачев, А. И. Соловьев, Введение в политологию, М., 1996, էջ 250:

Քաղաքական գիտության մեջ մյուս հեղինակավոր ուղղությունը (Մ. Խաբերմաս, Կ. Լուվան) քաղաքական սոցիալականացումը դիտարկում է որպես ակուլտուրացիայի երևույթ, այսինքն՝ արժեքների յուրացման գործընթաց՝ առաջին պլանում, այսպիսով, դնելով մարդու քաղաքական գիտակցության և վարքի ներանձնային, հոգեբանական մեխանիզմները⁴ :

Որոշ գիտնականներ, որոնք հարում են հոգեվերլուծության ուղղությանը (Է. Էրիկսոն, Է. Ֆրոյդ), կարևորագույնը համարում են քաղաքական գործունեության անգիտակցական ձևերը: Ըստ նրանց՝ քաղաքական սոցիալականացումը մարդկային զգացմունքների և պատկերացումների քաղաքականացման թաքնված գործընթաց է⁵:

Չնայած այս մոտեցումների տարբերություններին՝ գիտնականների մեծ մասը համզում է այն բանին, որ քաղաքական սոցիալականացման կարևորագույն գործառույթը անձի կողմնորոշվելու ընդունակությունն է քաղաքական տարածության մեջ: Այս իմաստով քաղաքական սոցիալականացումն իրենից ներկայացնում է երկկողմանի գործընթաց. մի կողմից՝ այն փաստում է անձի կողմից որոշակի նորմերի, արժեքների, դերային սպասումների յուրացման հանգամանքը, որը պահանջում է քաղաքական համակարգը, մյուս կողմից՝ ցույց է տալիս, թե ինչպես է անձը ընտրողաբար յուրացնում այդ արժեքները և պատկերացումները՝ ամրագրելով դրանք քաղաքական վարքի այս կամ այն ձևերում:

Քաղաքական սոցիալականացումն իրենից ներկայացնում է հասարակության քաղաքական կառույցների վերարտադրություն, որը բնորոշ է հասարակական-քաղաքական հարաբերություններին, այդ հարաբերությունները կրող սուբյեկտների մասնակի որակներին՝ անձանց, որոնք փաստացիորեն ստեղծում, պահում և իրականացնում են այդ հարաբերությունները իրենց կյանքի ընթացքում: Սոցիալականացումը կատարում է յուրօրինակ միջնորդի դեր, որն անցյալը կապում է ապագայի հետ:

Սոցիալականացման մասնավոր գործառույթի՝ ավանդական հասարակական հարաբերությունների պահպանման տեսանկյունից սոցիալականացումն անձի խիստ ներգրավումն է մինչ այդ ստեղծված հասարակական հարաբերությունների համակարգում, ինչը նպաստում է նրա՝ սոցիալապես նշանակալից կյանքի նպատակային ասիմանափակմանը: Սակայն սա մի կողմն է միայն:

Հիշենք Մարքսի դիպուկ սահմանումը. «Անհատը, համոզեա գալով որպես սոցիալականացման «օբյեկտ», միաժամանակ համարվում է նաև հասարակական ակտիվության սուբյեկտ, հասարակական ձևերի ստեղծողը: Դրա հետ մեկտեղ, փոխվում են ոչ միայն օբյեկտիվ պայմանները, փոխվում են նաև հենց իրենք՝ արտադրողները՝ մշակելով նոր որակներ, ստեղծելով նոր ուժեր և նոր պատկերացումներ, շփման նոր միջոցներ, նոր պահանջումներ և նոր լեզու»⁶:

Այլ կերպ՝ չի կարելի մոռանալ այն փաստը, որ ոչ միայն հասարակությունն է կերտում մարդուն՝ «homo politikus»-ին, այլև մարդն էլ ստեղծում է հասարակություն, ինքն իրեն և շրջապատին: Անձը միաժամանակ քաղաքականության օբյեկտ է և սուբյեկտ:

Քաղաքագիտության մեջ գոյություն ունի քաղաքական սոցիալականացման հետազոտման երկու մոտեցում⁷.

1. Քաղաքական սոցիալականացման ընդհանուր տեսության տեսանկյունից, որը մեկնաբանում է, թե ինչպես է ընթանում անհատի սոցիալականացումը քաղաքական միջավայրում: Սա սոցիալականացման ընդհանուր տեսության մասնակի բնագավառն է:

2. Քաղաքական տեսության տեսանկյունից, որը քաղաքական գիտությունը քիչ է ուսումնասիրել: Դրա ուսումնասիրության օբյեկտը քաղաքական սոցիալականացման ընդհանուր տեսության կատեգորիաներն են, որոնք անհրաժեշտ և օգտակար են քաղաքական համակարգերի վերլուծության ժամանակ:

Քաղաքագետների մեծ մասը կարևորում է առաջին մոտեցումը՝ քաղաքական սոցիալականացումը համարելով կամ քաղաքական հայացքների, գաղափարների և նորմերի փոխանցման գործընթաց սերնդեսերունդ, կամ անհատի քաղաքական հասունացման, նրա քաղաքական ես-ի ձևավորման գործընթաց:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը:

⁶ Կ. Մարքս, Փ. Էնգելս, Соч., т. 46, ч. 1, էջ 483-484:

⁷ Տե՛ս В. И. Жукова, Б. И. Краснов, Общая и прикладная политология, М., 1997, էջ 715:

Մինևույն ժամանակ Դ. Իստոնը և Ռ. Գեսը քաղաքական սոցիալականացումը դիտարկում են որպես միջոց, որի օգնությամբ քաղաքական համակարգի անդամները ձեռք են բերում երեք հիմնական կենսական կողմնորոշումներ⁸։

1. Քաղաքական գիտելիքների որոշակի գումար, պատկերացումներ քաղաքական գործընթացների բնույթի, քաղաքական լիդերի գործունեության մասին։

2. Քաղաքական արժեքներ, որոնք դիտվում են որպես ընդհանուր նպատակներ, որոնց պետք է ձգտի համակարգը։

3. Կողմնորոշումներ, որոնց միջոցով անհատը հարաբերվում է քաղաքական օբյեկտների հետ (վստահություն, համաձայնություն, համակրանք, թշնամանք և այլն)։

Ժամանակակից հասարակության մեջ մեծ կարևորություն ունեն քաղաքական սոցիալականացման երկու հիմնական մակարդակները⁹։

I. Մակրոմակարդակը, այսինքն՝ ինչպես է ընթանում անձի մուտքը քաղաքականություն քաղաքական համակարգերի շրջանակներում, ինչպիսի գործոնների ազդեցությամբ է ընթանում քաղաքական վարքի և գիտակցության ձևերի ստեղծումը, ինչպես են տարբեր նորաստեղծ կուսակցություններ, մտնելով այս կամ այն երկրի քաղաքական համակարգի մեջ, անդամագրում նոր անդամների, ինչպես է ձևավորվում քաղաքական գիտակցությունը գաղափարախոսության ազդեցությամբ։

II. Միկրոմակարդակը, այսինքն՝ անձի ներգրավումը որևէ կոնկրետ քաղաքական կազմակերպության մեջ, նրա կողմից որոշակի դերերի, վարքի մոդելների յուրացումը։ Վերլուծելով քաղաքական սոցիալականացման մակրո- և միկրոմակարդակները՝ փորձենք տալ քաղաքական սոցիալականացման սահմանումը. քաղաքական սոցիալականացումը անձի քաղաքական գիտակցության և քաղաքական վարքի ձևավորման գործընթացների ամբողջություն է քաղաքական և ոչ քաղաքական գործոնների ազդեցությամբ։ Քաղաքական գիտակցությունը անբակտեիլորեն կապված է քաղաքական սոցիալականացման հետ։ Քաղաքական գիտակցությունը ծագել է քաղաքականության և քաղաքական հարաբերությունների հետ միասին։ Քաղաքականությունը յուրահատուկ բնագավառ է, որտեղ ի հայտ են գալիս դասերի արմատական շահերը, նրանց նպատակները և խնդիրները մյուս դասերի կամ սոցիալական խմբերի նկատմամբ¹⁰։

Քաղաքական գիտակցությունն ունի ոչ միայն հասարակական, այլ նաև անձնական բնույթ, որը ոչ լրիվ և ոչ միշտ է համապատասխանում առաջինին, քանի որ յուրաքանչյուր մարդ անհատականություն է։ Այստեղ կարևորվում է քաղաքական սոցիալականացման սուբյեկտների նպատակամղված գործունեությունը, որի արդյունքն անհատականության ձևավորումն է և գիտակցության բարձրացումը։ Ասվածից կարելի է պնդել, որ քաղաքական գիտակցությունը մարդու հոգևոր արժեքների հիմքն է, որի շնորհիվ նա կարողանում է գնահատել սոցիալական գործընթացները, իր և ուրիշների արարքները իր և հասարակության տեսակետից ընդհանրապես։

Անձի քաղաքական գիտակցությունը և վարքը ձևավորվում են ոչ միայն քաղաքական (չնայած նրանց առաջնային նշանակությանը), այլև ոչ քաղաքական գործոնների ազդեցությամբ։

Ոչ քաղաքական գործոններն են՝ ընտանիքը, դպրոցը, եկեղեցին, մշակույթը, արվեստը, գեղարվեստական գրականությունը, զանգվածային լրատվության միջոցները և այլն, որոնք էական դեր ունեն քաղաքական գաղափարների և արժեքների փոխանցման գործընթացում։

Քաղաքական գործոնները ձևավորվում են քաղաքական համակարգում, որտեղ հաշվի են առնվում պետական մեքենայի բնույթը և տեսակը, ռեժիմը, քաղաքական ինստիտուտները։ Անհատին քաղաքականության մեջ ներգրավելու մեխանիզմների օգնությամբ այս գործոնները հաստատվում են նրա քաղաքական վարքագծի մեջ։

Իրականության մեջ քաղաքական և ոչ քաղաքական գործոնները միահյուսված են և ոչ միանշանակ դեր են խաղում։

Այսպիսով, քաղաքական գիտակցությունը քաղաքական սոցիալականացման գործընթացի իրականացման կարևորագույն տարրն է։

Քաղաքական սոցիալականացման գործընթացը ներառում է բազմաթիվ մակարդակներ¹¹։

⁸ Տե՛ս նույն տեղը։

⁹ Տե՛ս **В. Б. Шестопал**, *Очерки политической психологии*, М., 1990, էջ 70։

¹⁰ Տե՛ս "Вестник Московского университета", 1991, N 6, էջ 75։

¹¹ Տե՛ս **В. Н. Лавриновичко**, *Политология*, М., 1999, էջ 302։

Դրանցից ամենալայն ուղղվածությունն ունեն միջազգային հանրությունը և կազմակերպությունները: Այս մակարդակում անձի վրա ներգործում են միջազգային հասարակայնության կողմից ընդունված նորմերը և արժեքները:

Քաղաքական սոցիալականացման սոցիալական մակարդակն ընդգրկում է մեծ սոցիալական խմբերը և հասարակությունն ամբողջությամբ: Այս մակարդակում անձի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ պետությունը, իշխանությունը, քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ճգնաժամերը, գործազրկությունը և այլն:

Քաղաքական սոցիալականացման ստորին մակարդակն անձնային մակարդակն է, որի ժամանակ անձը կրում է իր շրջապատի ազդեցության կնիքը: Այստեղ սոցիալականացման մեխանիզմներն են՝ շահերը, արժեքային կողմնորոշումները, շարժառիթները, դրդապատճառները, որոնք կառավարում են անձի վարքը և գիտակցությունը քաղաքականության մեջ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ քաղաքական կազմակերպության նպատակները և արժեքները մեխանիկական ազդեցություն չունեն անձի վրա այնքանով, որքանով նրանք պետք է անցնեն անձի անհատական պահանջմունքների պրիզմայով: Առանց անձի կողմից արժեքների յուրացման իմաստավորման, հնարավոր չէ մեխանիզմների նորմալ գործառնություն, որը շարունակվում է ողջ կյանքի ընթացքում: Յուրացված քաղաքական նորմերը և արժեքները քաղաքական ոլորտում ծնում են հնարավոր վարքի քիչ թե շատ կայուն մոդելներ: Այս գործընթացի բնորոշ գիծը ստացված տեղեկատվության ակտիվ ընկալումն է, նրա մշակումը և քաղաքական կյանքի երևույթների նկատմամբ իր դիրքորոշման հստակեցումը:

Հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները, անկասկած, իրենց հետքն են թողնում կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում՝ կրթության համակարգի, դաստիարակության և սոցիալականացման վրա: Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի սոցիալականացման և դաստիարակության փոխհարաբերությունը բավական բարդ և հակասական գործընթաց է: Գիտական գրականության մեջ հաճախ փորձ է արվում մույնացնել այդ երևույթները: Ուստի, խուսափելով այդ միտումից, նշենք դրանց տարբերությունները և հակասությունները¹²:

Սոցիալականացումը գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում սոցիալական փորձի և արժեքային կողմնորոշումների յուրացում որոշակի սոցիալական դերերի կառարման համար:

Դաստիարակությունն անընդմեջ և նպատակադիր գործունեություն է՝ անձի կամ խմբի մեջ ձևավորելու հասարակայնորեն անհրաժեշտ արժեքներ, գիտակցություն և վարք: Դաստիարակության համակարգը կարծես թե կարգավորում է սոցիալականացման գործընթացը՝ որոշ առումներով հանդիսանալով նրա մախահիմքը:

Արդիականացման ներկա փուլում սոցիալականացման և դաստիարակության հիմնախնդրի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հակասությունների ըմբռնման համար՝ կապված մարդկանց կենսագործունեության հետ:

Որո՞նք են հասարակության մեջ գոյություն ունեցող հակասությունների պատճառները¹³.

1. Նախորդ հասարակությունից մնացած երևույթները, որոնք բարեփոխումների ազդեցությամբ ձևափոխվում են և դրվում նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր շրջանակների մեջ:

2. Ժամանակակից հասարակության օբյեկտիվ օրենքների գործողությունը, հնի և նորի միջև պայքարի անխուսափելիությունը: Պահպանողական միտումների և կաղապարների ազդեցությունը մարդկանց կենսագործունեության վրա բավական ուժեղ է և տարածված:

3. Հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների, հասարակության բարոյական, իրավական և քաղաքական պահանջմունքների խախտումը: Իրական հասարակական հարաբերություններից ծագող հակասությունները սուբյեկտիվ պատճառներով գնահատական չեն ստանում և չեն լուծվում: Արդյունքում դրանք դառնում են արգելակ հասարակության զարգացման համար:

Անձի զարգացումն ինքնին բազմաբնույթ և հակասական գործընթաց է, քանի որ իր վրա կրում է հասարակական բոլոր տեսակի հարաբերությունների օբյեկտիվացման և սուբյեկտիվաց-

¹² Sh' u B. B. Morozov, A. P. Skrobos, Противоречивость социализации и воспитание молодежи в условиях реформ, - "Социально-политический журнал", 1998, N 1, էջ 149:

¹³ Sh' u նույն տեղը:

ման ազդեցության կնիքը: Բնականաբար, այս փաստը մտածողներին տարբեր մոտեցումների տեղիք է տվել: Այսպես, Կովալյովը անձի զարգացման այսպիսի հակասություններ է մատնանշում. հակասություններ անձի տարբեր կողմերի կամ հատկությունների, ցանկությունների և դրանց իրականացման հնարավորությունների, տրամաբանականի և զգայականի միջև, որոնք ծագում են քնատուր և ձեռքբերովի հատկությունների անհամապատասխանությունից¹⁴:

Լիխաչովը տարբերակում է օբյեկտիվ անհրաժեշտության՝ դառնալ քաղաքացի, ունենալ պարտքի զգացում, հասարակական ակտիվություն, և սուբյեկտիվ դժվարության միջև եղած հակասությունը, այն է՝ սոցիալական փորձի պակաս, կամային հատկությունների, գիտակցականության բացակայություն¹⁵:

Պետք է նշել, որ Կովալյովը և Լիխաչովն իրավացիորեն շեշտը դնում են անձի զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի վրա, որոնք պայմանավորված են անձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկությունների հետ: Կյանքի ընթացքում այս հատկությունները գտնվում են հակասության մեջ, որով պայմանավորված է անձի զարգացումը:

Քաղաքական սոցիալականացումը շարունակական գործընթաց է: Ուստի քաղաքագետները գտնում են, որ գոյություն ունի առաջնային և երկրորդային քաղաքական սոցիալականացում: Մրանց միջև տարբերությունները հանգում են հետևյալների՝ մարդու տարիքը, սուբյեկտիվ փորձի առկայությունը, հակվածությունը ինքնուրույնության, վարքը քաղաքական ոլորտում:

Առաջնային քաղաքական սոցիալականացումը բնութագրում է մարդու կողմից քաղաքական կատեգորիաների նախասկզբնական ընկալումը, որն աստիճանաբար նրա մեջ ձևավորում է անհատական ընտրողական հարաբերություն քաղաքական կյանքի երևույթների նկատմամբ: Ամերիկյան քաղաքագետներ Իստոնը և Դենիսը քաղաքական սոցիալականացման այս փուլի համար նշում են չորս կարևոր տեսանկյուն¹⁶: Նրանք գտնում են, որ այս փուլը քաղաքական կյանքի անմիջական ոլորտ է, որի մասին երեխան իմանում է իր ծնողներից, նրանց գնահատականներից, զգացմունքներից ու վերաբերմունքից: Այս հիմքի վրա երեխայի մեջ տեղի է ունենում քաղաքականության անհատականացում, որի արդյունքում իշխանական այս կամ այն ֆիգուրները նրա համար դառնում են քաղաքական համակարգի հետ շփման կերպարներ: Այդպիսի կերպարներ կարող են լինել երկրի նախագահը կամ ոստիկանը, որոնց երեխան հաճախ է տեսնում հեռուստացույցով կամ հաճախ է լսում նրանց մասին: Նրանք վարքի գնահատականի հիման վրա երեխան դառնում է «քաղաքական խաղի» մասնակից և աստիճանաբար յուրացնում է վարքի այս կամ այն սխեման: Այս ձևով՝ սիրելով կամ ատելով քաղաքական կերպարներին, երեխան քաղաքականացնում է քաղաքականությունը: Արդյունքում առաջնային «քաղաքականությունը» հանդես է գալիս որպես սեփական հատկությունների և որակների ինստիտուցիոնալացում: Իշխանության կերպարների հնարավորությունների և սահմանափակումների հասկացությանը զուգահեռ՝ երեխայի մեջ ընթանում է սեփական իրավունքների մասին պատկերացումների ձևավորման գործընթաց: Սակայն սկզբում նա հակվում է դեպի արդարության զգացմունքները, դեպի բարոյական ճորմերը, որոնք զգում է, բայց չի կարող հստակ ձևակերպել: Միայն զարգացման ավելի բարձր փուլում է հասկանում, որ իր իրավունքներն ամրագրված են որոշակի օրենքներով և հասարակության ավանդույթներով, որոնց իր ծնողները կամ ուսուցիչը պարտավոր են ենթարկվել: Շատ կարևոր է, որ նախասկզբնական սոցիալականացումը չհիմնվի գաղափարայնացված կերպարների և հասկացությունների վրա: Գաղափարական տեսակետների և իրական հասարակական հարաբերությունների միջև թեկուզ փոքր տարբերությունները կասկածի տակ են դնում հասարակության մեջ գոյություն ունեցող փորձի մշակութային նշանակությունը:

Քաղաքական սոցիալականացման երկրորդ փուլը սկսվում է դպրոց ընդունվելուց մինչև ընդհանուր և մասնագիտական կրթության ավարտը: Այս ժամանակահատվածում մարդիկ ձեռք են բերում որոշակի մտային հասունություն, հիմնական սոցիալական որակներ: Սա կենսական ուղու նախապատրաստական փուլն է: Քանի որ այստեղ առարկայական գործունեության հիմնական ձևն ուսուցումն է, ուստի անհատը կրթական շրջանում ավելի շատ հայցողի դերում է, քան գործչի: Այս փուլում տեղի է ունենում համընդհանրական քաղաքական արժեքների և հայացքների ուսումնասիրություն և ընկալում, սոցիալական պրակտիկայի սկզբնական փորձի ձեռքբերում:

¹⁴ Տե՛ս Ա. Գ. Ковалев, Психология личности, М., 1965, էջ 241-242:

¹⁵ Տե՛ս Բ. Թ. Лихачев, Воспитательные аспекты обучения, М., 1982, էջ 28:

¹⁶ Տե՛ս Բ. Կ. Лавриновичко, Политология, էջ 28:

Քաղաքական սոցիալականացումը դպրոցում իրականացվում է երկու ուղղություններով. առաջին՝ ուղիղ քաղաքական սոցիալականացում, այսինքն՝ հատուկ դասընթացներ, որտեղ երեխաներին ուսուցանում են երկրի քաղաքական կառուցվածքի սկզբունքների մասին, բացատրում քաղաքացիների իրավունքները և պարտականությունները: Պետք է նշել, որ բոլոր երկրներում այսօրինակ դասընթացները զուտ տեղեկատվական բնույթ չունեն, դրանցում առկա է գաղափարախոսության տարրը:

Անուղղակի քաղաքական սոցիալականացումը ոչ այնքան ակնհայտ գործընթաց է: Դպրոցում երեխան հայտնվում է սկզբունքորեն նոր միջավայրում: Այս պայմաններում երեխան սկսում է յուրացնել ուրիշ մարդկանց հետ փոխհարաբերվելու կանոնները, ձեռք է բերում իշխանության մարմինների հետ շփման փորձ: Դպրոցում փոխհարաբերության մակարդակը ազատության աստիճանն է, որը երեխային հնարավորություն է տալիս ճանաչելու իր իրավունքները: Այս ամենը երեխայի մեջ ձևավորում է վարքի մոդելներ, որոնք նա հետագայում իրականացնում է:

Դեմոկրատական հասարակության մեջ դպրոցի խնդիրները ներառում են քաղաքական ուսուցումը, այսինքն՝ համապատասխան գիտելիքների ձեռքբերումը, դեմոկրատական նորմերի և արժեքների ուսուցանումը, ինչպես նաև քննադատական վերաբերմունքի ձևավորումը քաղաքական ինստիտուտների և գործընթացների նկատմամբ: Օրինակ՝ ԱՄՆ-ում դպրոցն իրավամբ համարվում է պետական քաղաքականության գործիք: Դպրոցական ծրագրերը կոչված են «ամերիկացնելու» անչափահասին, այսինքն՝ նրա ուղեղում ներմուծելու հավատարմություն ամերիկյան քաղաքական համակարգին, հարգանք պատմության և ավանդույթների նկատմամբ:

Հարկ է ըղգծել նաև դպրոցականների ոչ ձևական ուսուցումը: Այն ներառում է դպրոցականների ոչ ծրագրային գործունեությունը, մասնակցությունը տարբեր տիպի կազմակերպություններին, ոչ պարտադիր բնույթի միջոցառումներին: Այսպիսի գործունեությունը ձևավորում է որոշակի հատկություններ՝ ակտիվություն, պատասխանատվություն գոյություն ունեցող արժեքների հանդեպ: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ ինչքան բարձր է դպրոցականների մասնակցության աստիճանը ոչ ծրագրային գործունեությանը, այնքան հասուն և զարգացած գնահատական են տալիս կառավարությանը, քաղաքականությանը և այլն: Դրա հետ մեկտեղ այստեղ նկատելի է հետևյալ կախվածությունը¹⁷.

1. Ինչքան բարձր է ծնողների կրթական մակարդակը, այնքան հաճախ է երեխան մասնակցում ոչ ծրագրային գործունեությանը:

2. Ինչքան մեծ է աշակերտի մասնակցության աստիճանը, այնքան բարձր է նրա գիտակցությունը:

3. Ինչքան շատ է աշակերտը զգում դպրոցական համակարգի կարևորությունը, այնքան մեծ է նրա սոցիալական հավատը, պատասխանատվությունը:

4. Ինչքան բարձր է աշակերտի սոցիալական պատասխանատվությունը, այնքան ավելի դրական է նրա վերաբերմունքը:

Անշուշտ, այս բնութագրերը մարդու համար սահուն մուտք և մասնակցություն են ապահովում քաղաքականության ոլորտ:

Քաղաքական սոցիալականացման կարևոր ինստիտուտ է բարձրագույն դպրոցը: Համեմատելով անցյալի հետ՝ ղփար չէ նկատել, որ ուսանողական շարժումները մեր օրերում ունեն էական ազդեցություն երկրի քաղաքական կյանքի վրա: Արմատական ուսանողական շարժումը քափանցել է նաև քաղաքականության բնագավառ: Այս պարագայում քաղաքական լիդերները լայն հնարավորություն ունեն փոխանցելու քաղաքական արժեքները երիտասարդության լայն շերտերին: Ուստի այստեղ մեծ նշանակություն է ձեռք բերում քաղաքական մասնակցության անհատական փորձը և արդեն ձևավորված խմբակային գիտակցությունը:

Քաղաքական սոցիալականացման հիմնական պայմաններից է գործողությունների ազատության ապահովումը, անհատի մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: Այդ ազատությունը հիմնականում կախված է ինստիտուցիոնալ համակարգի տիպից, տնտեսական հարաբերությունների բնույթից, ինչպես նաև անձի հասունության մակարդակից:

Քաղաքական սոցիալականացման գործընթացում կարևորվում է հասունության ժամանակաշրջանը, քեև քաղաքական կողմնորոշման հիմքերը դրվում են դեռևս մանկական և պատանե-

¹⁷ Sbu "Общая и прикладная политология", под общ. ред. Жукова В. И., Краснова Б. И., указ. соч., М., 1997, էջ 716:

կան տարիներին, այնուամենայնիվ հասուն տարիքում և ս մարդը չի ազատվում սոցիալականացման ազդեցությունից:

Քաղաքական սոցիալականացման առաջնային օղակ է ընտանիքը: Հենց այստեղ են ձևավորվում անձի քաղաքական կողմնորոշումների և հայացքների հիմքերը: Ակնհայտ է, որ ընտանիքը շատ դեպքերում նախորոշում է երեխայի քաղաքական հայացքները և վարքը: Ընտանիքն ազդում է ոչ միայն երեխայի քաղաքական կողմնորոշումների վրա, այլև ձևավորում է քաղաքական գործընթացի ակտիվ կամ պասիվ մասնակից: Ամերիկյան պրեզիդենտների շատ կենսագիրներ մատնացույց են անում ընտանիքի կարևոր ազդեցությունն ապագա պրեզիդենտների դաստիարակության վրա: Առաջին ծանոթությունն իշխանության հետ տեղի է ունենում ընտանիքում, որտեղ իշխանությունը և օրենքը անձնավորվում են ծնողների կերպարներով: Տվյալ դեպքում նրանց իշխանությունը քացարձակ է, քանի որ երեխան իրավունք և հնարավորություն չունի հակադրվելու նրանց: Այսպիսով, առաջին իշխանությունը, որի հետ քախվում է երեխան, իր էությունը ամրագրատիրական է¹⁸:

Քաղաքական սոցիալականացման առաջին փուլը կայանում է այն ժամանակ, երբ երեխան սկսում է գիտակցել, որ աշխարհում, ծնողներից քացի, որպես իշխանության կրող, գոյություն ունի նաև ուրիշ իշխանություն: Իսկ դրա գիտակցմանը նպաստում են սոցիալական հանգամանքները, որոնց դեպքում ծնողները քախվում են իշխանության ներկայացուցիչների հետ: Մեծ ջանքեր և ժամանակ է պահանջվում հասկացնելու, որ իշխանությունը ոչ միայն բաշխված է իշխանության տարբեր սուբյեկտների միջև, այլև ոչ մի դեպքում այն քացարձակ չէ. իշխանության սուբյեկտներից յուրաքանչյուրը ենթարկվում է որոշ սահմանափակումների: Այս դեպքում խոսքն է, իհարկե, ժողովրդավարական երկրի մասին է, ուր գոյություն ունի օրենքի իշխանություն:

Ընտանիքում քաղաքական սոցիալականացման գործընթացը չի ավարտվում իշխանության մասին պատկերացումների ձևավորմամբ: Դրան զուգահեռ՝ երեխայի մեջ տեղի է ունենում սեփական իրավունքների մասին պատկերացումների ձևավորման գործընթաց:

Քաղաքական սոցիալականացման միջոցներն են՝ սոցիալական, իրավական նորմերը, ՁԼՄ-ը, գաղափարախոսությունը:

Ամենաընդհանուր ձևով սոցիալական նորմերի գործողությունը բնութագրվում է հասարակության նշանակալից վարքի տիպերի, սահմանների ընդունմամբ, որոնց շրջանակներում անհատական վարքը ծառայում է հասարակական նպատակների իրականացմանը:

Անձի քաղաքական սոցիալականացման ժամանակ էական դեր են խաղում իրավական նորմերը: Դրանք յուրաքանչյուր քաղաքացու վրա ունեն անմիջական ազդեցություն: Իրավունքը միջնորդավորում է կարևորագույն հարաբերությունները՝ ուղղորդելով զարգացման և կատարելագործման: Այն որոշում է մարդու վարքի և ազատության հնարավոր չափերը՝ նրան տալով ստեղծագործական գործունեության ազատություն, անձնական շահերի և պահանջումների բավարարում: Միաժամանակ իրավական նորմերը ենթադրում են պարտադիր վարքի ձևեր որոնք յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել հասարակության նորմալ գործառնության համար:

Քաղաքական սոցիալականացման գործընթացում հսկայական դեր ունեն ՁԼՄ-ը, որոնք ընդունակ են ամենակարճ ժամկետներում ազդել մարդկանց վրա:

Քաղաքական սոցիալականացման իրականացման մեխանիզմը մարդու գործողություններում կարելի է պատկերացնել հետևյալ կերպ՝ հետաքրքրությունը քաղաքական տեղեկատվության հանդեպ, քաղաքական գնահատական տալու սովորույթը աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, լայն քաղաքական մտադրիզոնը, համակարգված քաղաքական գիտելիքների պահանջը, որոնք իրականացվում են կրթությամբ և ինքնակրթությամբ:

Ժողովրդավարական երկրներում քաղաքականության մասին իրազեկվում ենք զանգվածային լրատվության միջոցներից: Ընդհանրիվ իր հնարավորությունների, ՁԼՄ-ը քաղաքական սոցիալականացման գործընթացում կարևոր և պոտենցիալ միջնորդի դեր են կատարում: Հանդիսանալով սոցիալական կառավարման և քաղաքական մանիպուլյացիայի հզոր գործիք՝ ՁԼՄ-ը դառնում են հասարակական-քաղաքական հարաբերությունների կարևոր տարր: Հսկայական ազդեցություն ունենալով միլիոնավոր մարդկանց վարքագծի վրա՝ դրանք մասնակցության իրենց բա-

¹⁸ Տե՛ս Լ. Я. Готман, В. В. Шестопал, Политическая психология, Ростов-на-Дону, 1996, էջ 78:

ժինն ունեն իրականացվող պետական քաղաքականության մեջ:

Անհատի վերափոխումը գիտակցական և ակտիվ սուբյեկտի նպաստում է քաղաքական սոցիալականացման այնպիսի համակարգի ձևավորմանը, որը հնարավորություն է ընձեռում քաղաքական մասնակցության համար: Ուստի քաղաքական սոցիալականացումը որոշակի քաղաքական գիտելիքների, արժեքների և նորմերի յուրացման, քաղաքական փորձի ձեռքբերման և փոխանցման գործընթաց է, որը թույլ է տալիս անձին դառնալ քաղաքական կյանքի լիիրավ մասնակից՝ քաղաքական մասնակցության հիմքերի հիմքը:

А. Н. Шалагетин - Политическая социализация как основа политического участия индивида. - Автор статьи концентрирует свое внимание на феномене политической социализации на современном этапе развития общества, когда с особой остротой можно наблюдать внутренние противостояния при процессе передачи политического опыта, существенные колебания в отношении доверия властям.

В статье политическая социализация рассматривается как основа политического участия индивида, что является краеугольным камнем демократии. Участие в политической жизни является естественной реакцией человека в его отношениях с социумом. Участие индивида в политической жизни имеет различные аспекты проявления и значение: посредством участия создаются условия для выявления возможностей, самоутверждения, для творческой деятельности личности.

В конечном счете, то, каким образом будет происходить развитие политической системы, зависит от степени и формы участия каждого гражданина.